Քննարկված է մանկավարժական խորհրդի
N 1 նիստում
31 AUG 2022

Հաստատում եմ՝
Դպրոցի տնօրեն ---------- Է.Հովհաննիսյան

ԵՐԵՎԱՆԻ

Մ.Իշխանի անվան
հմ 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Պետական ոչ առևտրային կազմակերպություն

2022 – 2023 ՈՒՍՏԱՐՎԱ
ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՏԱՐԵԿԱՆ

ՊԼԱՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Առաջնորդվելով ՀՀ ԿԳՄՍ, 03.09.2021թ., N02/12-21001 գրության նախարարությունը չի առարկում Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող դպրոցների յորաքանչյուր դասարանում սովորողների թիվը 20-ից ավել լինելու դեպքում ուսումնական գործընթացն անցկացնել ամենօրյա ռեժիմով առկա ձևաչափով իրականացնելուն՝ ապահովելով ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամանով:

2. Կազմակերպչական աշխատանքներ կորոնավիրուսի դեմ , ըստ ուղեցույց

3. Հիմնական պարտադիր կրթության իրականացում

4. Ուսուցիչների որակավորման բարձրացման աշխատանքների կազմակերպում

5. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում

6. Ներդպրոցական վերահսկողություն

7. Ներառական կրթության իրականացման աշխատանքներ, համընդհանուր ներառում

8. Աշխատանք ծնողների հետ

9. Կազմակերպչական աշխատանք

10. Միջոցառումներ երեխաների առողջության պահպանման ուղղությամբ

11. Դաստիարակչական աշխատանքներ

Դասարանների և աշակերտների թվաքանակը

Դասարան	Դասարանների քանակը	Աշակերտների թիվը	
		տարեսկիզբ	տարեվերջ
I	1	24	
II	1	21	
III	1	22	
IV	1	20	
V	1	24	
VI	1	25	
VII	1	17	
VIIIա	1	16	
VIIIբ	1	16	
IX	1	18	
Ընդամենը	**1 խումբ և 9 դասարան**	**15 203**	

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.	Աշակերտների ընդհանուր թիվը	203
2.	ՆԿՕ-ում ընդգրկված աշակերտների թիվը	13
	Ընդհանուր աշխատողների թիվը	37
	Ուսուցիչների թիվը	27
	ՆԿՕ աշխատակիցների թիվը	3
	Սպասարկող անձնակազմի թիվը	11
3.	Դասարանների քանակը	10
4.	Կրտսեր դպրոցի դասարանների քանակը	4
5.	Միջին դպրոցի դասարանների քանակը	6
6.	Ուսումնական հերթափոխ	միահերթ
7.	Ուսումնական պարապմունքների սկիզբը	8 30
8.	Ուսումնական շաբաթը (I-IX դասարաններ)	5-օրյա
9.	Ուսումնասիրվող օտար լեզուներ – ռուսերեն, անգլերեն, գերմաներեն	
10.	Ուսուցման կազմակերպման համակարգը - դասարանային և կաբինետային	
11.	Առարկայական մեթոդմիավորումների թիվը	4
12.	Առարկայական կաբինետների քանակը՝	4
	Ֆիզիկա	1 Կոջ. դպր
	Քիմիա	1 Կոջ. դպր
	Կենսաբանություն	1 Կոջ. դպր
	ՆԶՊ	1
	Անգլերեն	1 Կոջ. դպր.
	Գերմաներեն	1 Կոջ. դպր
	Ազգային երգ ու պարի, երաժշտության	1 Կոջ. դպր
	Տնարարության	1 Կոջ. դպր
	Համակարգչային	1 Կոջ. դպր
13.	Աշխատանքի ուսուցման արհեստանոց	1 Կոջ. դպր
14.	Շախմատի դասասենյակ	1
15.	Երկարօրյայի կաբինետ	1 Կոջ. դպր
16.	Ուսուցչանոց	1 համատեղ
17.	Գրադարան	1
18.	Համերգային և նիստերի դահլիճ	1
19.	Մուշեղ Իշխանի անվան թանգարան	1
20.	Հոգեբանամանկավարժական	2
21.	Բուֆետ	1
22.	Բուժկետ	1
23.	Արխիվ	1
24.	Մարզադահլիճ	1
25.	Սանհանգույց	6
26.	Պահեստներ	2

1. *Հիմնական պարտադիր կրթության իրականացում*

	Բովանդակություն	Ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1	Աշխատանք տանել պարտուսից դուրս աշակերտներ չունենալու համար	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս. դասղեկներ	
2	Պայմաններ ստեղծել նյութապես անապահով աշակերտներին կրթության համար անհրաժեշտ գրենական պիտույքներով և պարագաներով ապահովելու համար	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս. դասղեկներ	
3	Կատարել աշակերտների հաճախումների ամենօրյա ստուգում, կանխել կրկնվող ուշացումներն ու անհարգելի բացակայությունները: Այդ նպատակով դպրոցի տնօրինության, դասղեկի և աշակերտի ծնողի միջև կնքել եռակողմ պայմանագիր ՝ հստակեցնելով յուրաքանչյուր կողմի պարտականությունները	Ուստարվա ընթացքում	Հովհաննիսյան Է. Ս.Հակոբյան դասղեկներ և ծնողներ	
4	Աշխատանք տանել դժվար դաստիարակավող երեխաների և նրանց ծնողների հետ	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս.	
5	Պարտադիր ուսուցման իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին և դպրոցական խորհրդին	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս.	

2. *Ուսուցիչների որակավորման բարձրացման աշխատանքների կազմակերպում*

	Բովանդակություն	Ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1	Անցկացնել տնօրինության և առարկայական մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն:	Օգոստոս	Հովհաննիսյան Է. Բրուտյան Ն. մասնախմբի ղեկավարներ	
2	Ծրագրել մասնախմբերի հետագա գործունեությունը և ներկայացնել տնօրինությանը:	Օգոստոս	Բրուտյան Ն. մասնախմբի ղեկավարներ	
3	Ուսուցիչներին ընդգրկել վերապատրաստման, վերարակավորման տարբեր դասընթացներում:	Ուստարվա ընթացքում	ՏՈՒԱԳՏ մասնախմբի ղեկավարներ	
4	Մեթոդամանկավարժական օգնություն ցույց տալ սակավափորձ ուսուցիչներին /Ն.Աղայան, Ա. Հարությունյան, Ն.Եսայան, Ա.Բեգլարյան/ ՝ կազմակերպելով դասալսումներ փորձառու ուսուցիչների մոտ:	Ուստարվա ընթացքում	ՏՈՒԱԳՏ մասնախմբի ղեկավարներ	
5	Ուսուցիչներին պարբերաբար տեղեկացնել մանկավարժության նորագույն նվաճումներին, դասավանդման ժամանակակից արդյունավետ մեթոդներին: Էլ. գրատախտակ	Ուստարվա ընթացքում	ՏՈՒԱԳՏ մասնախմբի ղեկավարներ Է.Հովհաննիսյան	
6	Մանկավարժներին ծանոթացնել ՀՀ կառավարության կողմից ընդունված կրթությանը վերաբերվող որոշումներին, հրահանգներին և նորմատիվ փաստաթղթերին:	Ուստարվա ընթացքում	ՏՈՒԱԳՏ Ն.Բրուտյան	
7	Ուսուցիչների ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով կազմակերպել թիմային աշխատանք նախապես ընտրված թեմաների շուրջ	Ուստարվա ընթացքում	Հովհաննիսյան Է.	

8	Բաժանորդագրվել << Կրթություն>> շաբաթաթերթ և այլ կրթական պարբերականներ, կազմակերպել տարբեր հոդվածների քննարկումներ:	Ուստարվա ընթացքում	Հովհաննիսյան Է.	
9	Դպրոցի ուսուցիչներին ընդգրկել ՀՀ –ում գործող տարբեր միջազգային կազմակերպությունների միջոցով իրականացվող կրթական ծրագրերում:	Ուստարվա ընթացքում	Հովհաննիսյան Է.	
10	Ուսուցիչների ուղորդել մասնակցելու կամավոր ատեստավորման	Ուստարվա ընթացքում	Հովհաննիսյան Է.	

3.Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում

	Բովանդակություն	Ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1	Հրամանագրել . ա/ առարկայական մասնախմբի ղեկավարներին բ/ դասղեկներին գ/ արտադասարանական խմբերի ղեկավարներին դ/ վերապատրաստման գործուղվող ուսուցիչներին ե/ մանկավարժական խորհրդի անվանական կազմը:	25-30 օգոստոս	Հովհաննիսյան Է.	
2	Ստուգել և հաստատել ուսմասվարների, դասղեկների, գրադարանավարի, զինղեկի, մասնախմբերի ղեկավարների աշխատանքային պլանները:	30-31 օգոստոս	Հովհաննիսյան Է.	
3	Հրավիրել մանկավարժական խորհրդի նիստ և քննարկել ներքոհիշյալ հարցերը. Մ/Խ ձևավորում ա/ 2021-2022 ուստարում կատարված աշխատանքների ամփոփում և նոր ուսումնական տարվա խնդիրների պլանավորում բ/ 2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հաստատում գ/ անբավարար գնահատական ունեցող աշակերտների վերաքննության արդյունքների ամփոփում դ/ օրինակելի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի բաշխում ե/ 2022-2023 ուստարում 5- օրյա կամ 5- օրյա աշխատանքային շաբաթով աշխատելու հարցը զ/ կազմակերպչական հարցեր:	25 -30 օգոստոս	Հովհաննիսյան Է.	
4	Հաստատված ուսպլանի հիման վրա կատարել վերջնական դասաբաշխում, կազմել դասացուցակը:	25-31 օգոստոս	Տնօրինություն	

5	Ուսուցիչներին ժամանակին ապահովել առարկայական չափորոշիչներով , ծրագրերով և մեթոդական ձեռնարկներով:	Օգոստոսի 22-26	Տնօրինություն մասնախմբի ղեկավարներ	
6	Կահավորել դասասենյակները և նախապատրաստել , հետևել որ ուստարվա ընթացքում դպրոցում պահպանվի սանիտարահիգիենիկ պատշաճ վիճակ:	22-25 օգոստոս	Տնօրինություն	
7	Տարրական դասարաններում ապահովել հատուկ կահավորում, ուսումնական դիդակտիկ պարագաներ՝ ելնելով նրանց տարիքային առանձնահատկու - թյուններից:	22-25 օգոստոս	Հովհաննիսյան Է. Հակոբյան Ս.	
8	Հետևել ՆԶՊ առարկայի պարապմունքներին, թարմացնել և համալրել կաբինետի նյութատեխնիկական բազան:	Սեպտեմբեր	Տնօրինություն Մելիքյան Ս.	
9	Դասարաններում ստուգել աշակերտների ապահովվածությունը դասագրքերով, գրենական պիտույքներով, ձեռնարկել լրացուցիչ միջոցներ պակասը համալրելու ուղղությամբ:	05-09 սեպտեմբեր	Տնօրինություն դասղեկներ	
10	Նյութապես անբարենպաստ ընտանիքներից հաճախող աշակերտներին օգնել գեղչով դասագրքեր ձեռք բերելու հարցում:	սեպտեմբեր	Հովհաննիսյան Է. Հակոբյան Ս. դասղեկներ	
11	Սեպտեմբերի 1-ից նպատակային և կազմակերպված անցկացնել գիտության շաբաթը:	01-02 սեպտեմբեր	Տնօրինություն	
12	Ապահովել փոխտնօրենների, մասնախմբերի ղեկավարների և առաջավոր ուսուցիչների մասնակցությունը Կրթության ազգային ինստիտուտի կողմից կազմակերպվող առարկայական սեկցիոն պարապմունքներին:	հոկտեմբեր	Տնօրինություն մասնախմբի ղեկավարներ	
13	Ըստ ժամանակացույցի / կից ներկայացվում է/ բոլոր առարկաների	Ուստարվա	Հովհաննիսյան Է.	

	դասավանդման դրվածքի ուսումնասիրման նպատակով կատարել դասալսումներ և անցկացնել փաստացի գիտելիքների ստուգում / գրավոր և բանավոր /: Արդյունքները քննարկել մեթոդմիավորման և մանկավարժական խորհրդի նիստերում:	ընթացքում	Բրուտյան Ն. մասնախմբի ղեկավարներ	
14	Կազմակերպել դպրոցական օլիմպիադաներ բոլոր առարկաներից:	Դեկտեմբեր	Բրուտյան մասնախմբի ղեկավարներ	
15	Առարկայական չափորոշիչներին համապատասխան կիսամյակների վերջում կատարել աշակերտների փաստացի գիտելիքների ստուգում տնօրինության կողմից:	Դեկտեմբեր-մայիս	Հովհաննիսյան Է. Բրուտյան Ն.	
16	ԿԶՆԱԿ-ի կողմից վերապատրաստված ուսուցիչների օգնությամբ կազմակերպել սեմինարներ փորձի փոխանակման և դասավանդման նոր մեթոդը տարածելու նպատակով :	Ուստարվա ընթացքում	Տնօրինություն	
17	Աշխատանք կազմակերպել կրթությունն ազգային բովանդակությամբ իրականացնելու ուղղությամբ, այդ նպատակով. ա/ ուսուցիչներից պահանջել , որ յուրաքանչյուր դաս պլանավորվի՝ ելնելով այդ հայեցակետից գ/ 1-4-րդ դասարաններում արտադասարանական ընթերցանության ժամերը հատկացնել հայ մանկագիրների ստեղծագործությունների ուսումնասիրմանը դ/ ուստարվա ընթացքում կազմակերպել այցելություններ 1915թ Եղեռնի զոհերի հուշահամալիր, Եռաբլուր Սարդարապատ , Օշական, և այլուր	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս.	
18	Հետևել , որ առարկայական մասնախմբի ղեկավարները լսեն սահմանված քանակությամբ դասեր,	Ուստարվա ընթացքում	Բրուտյան Ն.	

	ուշադրություն դարձնեն դասալսումների վերլուծության որակին՝ մասնակից դարձնելով բոլոր ուսուցիչներին:			
19	Դասալսումների ընթացքում տնօրինության և մասնախմբերի ղեկավարների տեսադաշտում պահել հետևյալ հարցերը. ա/ դասի նպատակի հստակ ձևակերպում ելնելով կրթության բովանդակության երեք բաղադրիչներից՝ • Գիտելիքների համակարգ • Կարողությունների և հմտությունների համակարգ • արժեքային համակարգ, բ/ դասի նպատակների ճիշտ մեթոդների ընտրությունը գ/ տարբերակված և անհատական մոտեցումը դ/ մանկավարժական սկզբունքների ապահովումը ե/ աշակերտների տրամաբանության զարգացում, պրոբլեմային իրադրությունների ստեղծում և օգտագործում , աշակերտների կարողությունների բացահայտում զ/ աշակերտների ինքնուրույն աշխատանքի կազմակերպում և ուղղորդում է/ առարկայական չափորոշիչների նվազագույնի ապահովում:	Ուստարվա ընթացքում	Տնօրինություն	
20	Տարեվերջին կազմակերպել պարապմունքներ ետ մնացող աշակերտների հետ:	Մայիս	Հովհաննիսյան Է.	
21	Հավաքագրել դպրոցահասակ երեխաներին ,անցկացնել անվճար դասընթացներ՝ նախապատրաստելով նոր ուսումնական տարվան:	ապրիլ-մայիս	Տնօրինություն	

4. Ներդպրոցական վերահսկողություն

	Բովանդակություն	Ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1	Պարբերաբար ստուգել ծրագրերի, թեմատիկ պլանների կատարողականը, գրավոր աշխատանքների քանակը և ստուգման որակը բոլոր առարկաներից: Ամփոփել արդյունքները և քննարկել առարկայական մասնախմբերի նիստերում և տնօրենին կից խորհրդի նիստում:	Ուստարվա ընթացքում	ՏՈՒԱԳՏ մասնախմբերի ղեկավարներ	
2	Յուրաքանչյուր ամսվա վերջին հանրագումարի բերել աշակերտների ուշացումներն ու բացակայությունները և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցությունում:	Ուստարվա ընթացքում	Ուսմասվարներ մասնախմբերի ղեկավարներ	
3	Ուսմասվարների և մասնախմբերի ղեկավարների օգնությամբ ստուգել տեսալսողական պարագաների, համակարգչային տեխնիկայի օգտագործման վիճակը դասապրոցեսում:	Ուստարվա ընթացքում	Տնօրինություն	
4	Հիմնական դպրոցի ավարտական՝ 9-րդ և 4-րդ դասարանների առաջադիմությունը և որակը բարձրացնելու նպատակով կատարել. ա/ փաստացի գիտելիքների ստուգում բոլոր առարկաներից / գրավոր/ բ/ ամփոփել ստուգման արդյունքները գ/ քննարկել տնօրենին կից խորհրդակցությունում:	Ուստարվա ընթացքում	Տնօրինություն	
5	Մշտական վերահսկողություն սահմանել դպրոցական շենքի դասասենյակների, գույքի պահպանման , սանհանգույցների սանիտարական վիճակի, դպրոցական բակի և դպրոցին հարող տարածքի կանոնավոր մաքրման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս. Սահակյան Կ.	

6	Վերահսկողություն սահմանել էլ. մատյանների վարման գործընթացի նկատմամբ՝ փոխտնօրեններ, դասղեկներ:	Ուստարվա ընթացքում	ՏՈՒԱԳՏ մասնախմբի ղեկավարներ	

5. Ներառական կրթության իրականացման աշխատանքներ

	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող	Այլ նշումներ
1	Կազմակերպել դպրոցի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացահայտման և նրանց հանրակրթության մեջ ներգրավվման գործընթացին:	Ուստարվա ընթացքում	Հովհաննիսյան Է. ԲՄԹ	
2	Ապահովել ԿԱՊԿՈՒ աշակերտների բժշկահոգեբանամանկավարժական հանձնաժողովի կողմից գնահատման և քաղաքապետարանից անհրաժեշտ փաստաթղթերի ստացման գործընթացը:	Ուստարվա ընթացքում	Հովհաննիսյան Է. ԲՄԹ	
3	Հաստատել ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատող ԲՄԹ-ի հատուկ մանկավարժի, լոգոպեդի, հոգեբանի, սոցիալական մանկավարժի, դաստիարակի աշխատանքային ժամանակացույցը:	Օգոստոս-մայիս	Հովհաննիսյան Է.	
4	Վերահսկել անհատական ուսումնական պլանների ամբողջացման աշխատանքների իրականացումը՝ ներառելով աշակերտի բոլոր կարիքները , միջամտության ձևերը, ժամանակացույցը , պատասխանատու մասնագետներին:	Ուստարվա ընթացքում	Հովհաննիսյան Է.	
5	Իրականացնել դասալսումներ և դիտարկումներ ԿԱՊԿՈՒ	Ուստարվա ընթացքում	Հովհաննիսյան Է.	

	աշակերտների դասապրոցեսին և անհատական պարապմունքներին՝ պարզելու սովորողների ուսումնական գործունեության արդյունավոտությունը, յուրաքանչյուր սովորողի զարգացման շարժընթացը, ինչպես նաև հատուկ մանկավարժական աշխատանքների շարունակականությունն ու արդյունավետությունը:			
6	ԱՈՒՊ-ի քննարկում,ՄԱԾԱՊ-ի քննարկում, գնահատում, վերագնահատում, դիտարկում:	Օգոստոսի 30 Սեպտեմբերի 16		

6. *Աշխատանք ծնողների հետ*

	Բովանդակություն	Ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1	Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ, ընտրել ծնողխորհրդի անդամներ և նախագահներ:	Սեպտեմբեր 05-09	Հակոբյան Ս. դասղեկներ	
2	Նախապատրաստել ընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առջև դրված համատեղ լուծման ենթակա հարցեր:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս.	
3	Ձևավորել հաստատության ծնողական խորհուրդ , նրա անդամներին ներկայացնել խորհրդի նպատակները , կանոնադրությունը:	Սեպտեմբեր	Հակոբյան Ս.	
4	Կազմել ծնողների համար անցկացվող զրույցներ և զեկուցումների թեմատիկ պլան:	Սեպտեմբեր	Հակոբյան Ս.	
5	Ծնողական խորհրդի նիստում քննարկել դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացման , սոցիալապես անապահով և կարիքավոր աշակերտներին օգնություն կազմակերպելու հարցեր:	Ուստարվա ընթացքում	Հովհաննիսյան Է.	
6	Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներին:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս.	

7	Դպրոցի գործունեությամբ շահագրգռված ծնողներից ստեղծել խմբեր ըստ ծնողների մասնագիտությունների, անհրաժեշտության դեպքում նրանց ներգրավել մասնագիտական հմտություններ պահանջող տարբեր խնդիրների կարգավորման հարցերում:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս.	
8	Ծնողների հետ կնքել պայմանագրեր՝ հստակեցնելով նաև ծնողների պարտականություններն ու իրավունքները:	Ուստարվա ընթացքում	Հովհաննիսյան Է.	

7. *Կազմակերպչական աշխատանք*

	Բովանդակություն	Ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1	Ավարտել շենքի նախապատրաստման և մաքրման աշխատանքները, ստուգել դասասենյակների , բուժկաբինետի կահավորվածությունը և նախապատրաստվել նոր ուստարվան:	Օգոստոս	Տնօրինություն	
2	Վերանայել և վերջնականապես ավարտել դասաբաշխումը՝ հնարավորության դեպքում ապահովելով բոլոր ուսուցիչներին 1դրույքաժամով:	Օգոստոս	Հովհաննիսյան Է.	
3	Վերակոմպլեկտավորել դասարանները՝ ելնելով օպտիմալացման պահանջներից:	Օգոստոս	Հովհաննիսյան Է.	
4	Կազմակերպել կոնսուլտացիաներ և ընդունել վերաքննություններ:	Օգոստոս	Հովհաննիսյան Է. Բրուտյան Ն.	
5	Կազմել և ուստարվա սկզբում ունենալ կայուն դասացուցակ:	31 օգոստոսի	Բրուտյան Ն.	
6	Կազմել և կրթության վարչություն ներկայացնել 2021-2022 ուստարվա ներքին գնահատման հաշվետվությունը և 2022-2023 ուստարվա կոմպլեկտավորումը, հաստիքացուցակը և ուսուցիչների տարիֆիկացիան:	05-15 սեպտեմբերի	Հովհաննիսյան Է	
7	Կազմել և գործունեության մեջ դնել ժամանակավոր, իսկ այնուհետ հիմնական դասամատյանները:	01-07 սեպտեմբերի	Բրուտյան Ն.	
8	Շարունակել աշխատանքը ուսումնադաստիարակչական գործընթացի բարեփոխումների ուղղությամբ: Այդ նպատակով. ա/ միջին և կրտսեր դպրոցում դասարանները կոմպլեկտավորել	Օգոստոս	Հովհաննիսյան Է	

	25-30 աշակերտով բ/ դպրոցում իրականացնել 5-օրյա ռեժիմ 1- 9 –րդ դասարանների համար			
9	Շարունակել դպրոցի կահավորումը, գույքի ձեռքբերումը, միջանցքների ձևավորումը:	Ուստարվա ընթացքում	Տնօրինություն	
10	Խստորեն հետևել աշնանային և ձմեռային համազգեստներին , անցումը ձմեռային համազգեստին հոկտեմբեր-ապրիլ:	Ուստարվա ընթացքում	Տնօրինություն	
11	Կատարել աշխատանքի բաշխում դպրոցի տնօրինության անդամների միջև:	Օգոստոս	Հովհաննիսյան Է	
12	Կազմել հերթապահության գրաֆիկ ուսուցիչների, տնօրինության անդամների միջև:	05-09 սեպտեմբերի	Հակոբյան Ս.	
13	Հետևել դպրոցի արտադասարանական բոլոր միջոցառումների կատարմանը ուստարվա ընթացքում /տես կից ժամանակացույցը/:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս. մասնախբի ղեկավարներ ուսուցիչներ	

8.Միջոցառումներ երեխաների առողջության պահպանման ուղղությամբ

	Բովանդակություն	Ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1	Պարբերաբար ստուգել երեխաների առողջական վիճակը, կատարել առողջապահական զննում:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս. Սահակյան Կ.	
2	Հետևել, որ ժամանակին կատարվեն պատվաստումներն ըստ պլանի և տարիքի:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս. Սահակյան Կ.	
3	Կատարել ուսուցիչների ֆլյուրոգրաֆիկ քննություն:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս. Սահակյան Կ.	
4	Հետևել ուսուցիչների առողջապահական գրքույկների գործածությանը , տարբեր կաբինետային ստուգումների մասին փաստաթղթերի առկայությանը:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս. Սահակյան Կ.	
5	Պարբերաբար ստուգել դասարանների լուսավորվածությունը, կանխել աշակերտների տեսողության անկմանը նպաստող երևույթները:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս. Սահակյան Կ.	
6	Հետևել, որ աշակերտական նստարանները լինեն համապատասխան չափերի և հարմարավետ:	Ուստարվա ընթացքում	Տնօրինություն	
7	Հետևել դասասենյակների սանիտարահիգիենիկ, ըստ 24-Ն որոշումով:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս. Սահակյան Կ.	
8	Բուժքրոջ միջոցով անցկացնել զրույց սովորողների օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի մասին:	Ուստարվա ընթացքում	Սահակյան Կ.	
9	Պարբերաբար կազմակերպել դասընթացներ <<Առողջ ապրելակերպ>> թեմայով՝ աշխատանքներում ընդգրկելով որևէ ծնողի:	Ուստարվա ընթացքում	Սահակյան Կ.	

9. Դաստիարակչական աշխատանքներ

	Բովանդակություն	Ժամկետ	Կատարող անձ	Նշումներ
1	Օգնել դասղեկներին՝ ժամանակին կազմելու դասղեկական պլանները, հետևել նախատեսված միջոցառումների կատարմանը:	Օգոստոս	Տնօրինություն	
2	Կատարել դժվար դաստիարակվող, դաստիարակության համար անբարենպաստ ընտանիքներից հաճախող և նյութապես անապահով վիճակում գտնվող երեխաների հաշվառում:	Սեպտեմբեր-Հոկտեմբեր	Հակոբյան Ս. Դասղեկներ	
3	Կազմակերպել անհատական դաստիարակչական աշխատանք վերոհիշյալ երեխաների հետ, այդ նպատակով . ա/ կազմակերպել ուսուցիչների, ծնողխորհրդի անդամների այցելություններ նման երեխաների ընտանիքներ բ/ հետևել, որ այս աշակերտներն ընդգրկվեն արտադասարանական խմբակներում գ/ ներքին գործերի անչափահասների հարցերով զբաղվող տեսչության ներկայացուցիչների հետ կազմակերպել կանխարգելիչ աշխատանք՝ աշակերտների շրջանում իրավախախտումների բացառման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս.	
4	Շարունակել հետևողական աշխատանքը անհարգելի բացակայությունները և ուշացումները կանխելու ուղղությամբ. ա/ կազմակերպել ամենօրյա հաշվառում բ/ յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում քննարկել այս հարցը, պահանջել համապատասխան փաստաթղթեր, դպրոց հրավիրել հաճախակի բացակայող աշակերտների ծնողներին:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս.	

5	Նպատակային ձևով տնօրինել դպրոցական ներդրումները, կատարել կարիքավորների հաշվառում ,ստեղծել հանձնաժողով, ձեռք բերել և բաշխել անհրաժեշտ պարագաներ աշակերտական խորհրդի մասնակցությամբ:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս.	
6	Հետևել ծնողազուրկ երեխաներին, անհրաժեշտության դեպքում կազմակերպել նյութական և բարոյական օգնություն:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս. Դասղեկներ	
7	8-9 –րդ դասարանների աշակերտների միջև կազմակերպել հրաձգության մրցումներ:	Ուստարվա ընթացքում	Զինղեկ	
8	Կազմակերպել քաղպաշտպանության օր:	Մարտ	Զինղեկ	
9	Հետևել ֆիզկուլտուրայի դահլիճի հրատապ վերանորոգման աշխատանքներին , ապահովել համապատասխան մարզական գույքով:	Ուստարվա ընթացքում	Տնօրինություն	
10	Կազմակերպել հանդիպումներ ՆԳ բաժնի և երկրապահ ջոկատների ներկայացուցիչների հետ:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս. Զինղեկ	
11	Դպրոցում պարբերաբար կազմակերպել շաբաթօրյակներ, մաքրել շենքը, նրա շրջակայքը, կատարել ձմռան նախապատրաստական աշխատանքներ:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս.	
12	Դպրոցում զարգացնել աշակերտական ինքնավարությունը. ա/ ստեղծել աշակերտական խորհուրդ բ/ աշակերտական խորհրդի անդամների միջև կատարել աշխատանքի բաշխում գ/ աշակերտական խորհրդին մասնակից դարձել դպրոցում իրականացվող միջոցառումներին դ/ աշակերտական խորհրդին կից ստեղծել գույքի պահպանման և վերանորոգման խումբ:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս.	

13	Մանկավարժական կոլեկտիվի ուշադրության կենտրոնում պահել սովորողների գիտակցական կարգապահության բարձրացման հարցը ,այդ նպատակով. ա/ սահմանել սովորողների ամենօրյա հաշվառում բ/ աշակերտների կարգապահության հարցերի քննարկումներին մասնակից դարձնել ծնողներին, ծնողխորհրդի ներկայացուցիչներն, աշակերտական խորհրդին:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս. դասղեկներ	
14	Հաստատության շենքը , գույքը, սարքավորումներն ու դասագրքերը խնամքով պահպանելու նպատակով անցկացնել զրույցներ հետևյալ թեմաներով `<< Գիրքը քո լավագույն բարեկամն է , աչքի լույսի պես պահպանիր այն>>, << Դպրոցը մեր տունն է, նրա ունեցվածքը մեր սեփականությունն է>>:	Հոկտեմբեր	Հակոբյան Ս. դասղեկներ	
15	Ուսուցիչների և աշակերտների օգնությամբ ձևավորել միջանցքներն ու կաբինետները:	Ուստարվա ընթացքում	Տնօրինություն	
16	Պարբերաբար հրավիրել դասղեկների խորհրդակցություն, ծանոթանալ նրանց աշխատանքային գործունեությանը և հրահանգավորել:	Ուստարվա ընթացքում	Հովհաննիսյան Է. Հակոբյան Ս.	
17	Պարբերաբար ստուգել դասղեկների աշխատանքային պլաններն ու աշխատանքների կատարման ընթացքը:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս.	

19	Ուսումնասիրել և տարածել լավագույն դասղեկների աշխատանքային փորձը, այդ նպատակով. ա/ կազմակերպել դասղեկական օրինակելի ժամեր բ/ կազմակերպել մեթոդական զեկուցումներ դասղեկների աշխատանքի արդյունավետության բարձրացման վերաբերյալ:	Ուստարվա ընթացքում	Հակոբյան Ս.	